ՀՍՍՀ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1926—1932)

ՎԻԿՏՈՐ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Սոցիալիզմի տնտեսական հիմքի կառուցման ժամանակաշրջանում աճեց սովետական բանվոր դասակարգի հասարակական-քաղաքական ակտիվությունը, բարձրացավ նրա դերը պետության կառավարման մեջ։ Բանվոր դասակարգը պետության կառավարմանը մասնակցում է կոմունիստական կուսակցության, սովետների, արհմիությունների և հասարակական մյուս կազմակերպությունների միջոցով, սակայն նրա պետական գործունեության ղեկավոր առաջարկը սովետներն են, որոնք լայն հնարավորություն են տալիս բանվոր դասակարգին պետության կառավարման մեջ իր առաջատար դերն իրականացնելու համար։ Նրանք «իրենց ծրագրով լինելով աշխատավորության միջոցով կառավարելու օրգաններ, իրականում հանդիսանում են կառավարման օրգաններ աշխատավորության համար՝ պրոլետարիատի առաջավոր խավի միջոցով...»[1]— գրել է Վ. Ի. Լենինը։

Սոցիալիզմի կառուցման լենինյան պլանի իրագործումը կապված էր խոշոր դժվարությունների հաղթահարման հետ և պահանջում էր աշխատավորների ուժերի հսկայական լարում։ Առաջնորդվելով լենինյան այն դրույթով, որ սոցիալիստական հասարակության ստեղծումը ժողովրդական լայն մասսաների խնդիրն է, նրանց ստեղծագործ աշխատանքի և հարաճուն ակտիվության ծնունդը, կոմունիստական կուսակցությունը մեծ աշխատանք էր կատարում աշխատավորությանը պետության կառավարման մեջ ընդգրկելու ուղղությամբ։ Այդ նպատակով ՀԿ(բ)Կ-ն մշակեց և ձեռնարկեց պետական իշխանության մարմինների և հասարակական կազմակերպությունների աշխատանքները բարելավելու մի շարք միջոցառումներ։ Պետական ապարատի գործունեության կատարելագործման և այն մասսաներին մոտեցնելու հիմնական ուղիներից մեկը կուսակցությունը համարում էր սովետների աշխատանքի աշխուժացումը՝ բանվոր դասակարգի և աշխատավորության նորանոր զանգվածների ընդգրկման միջոցով։ ՀամԿ(բ)Կ և ԿՎՀ-ի 1926 թ. հուլիսյան միացյալ պլենումը նշում էր, որ սովետների աշխուժացման քաղաքականությունը ենթադրում է բանվոր դասակարգի առավելագույն ակտիվ մասնակցությունը սովետների աշխատանքին և նրա ղեկավարությունը բնակչության մյուս խավերի նկատմամբ[2]։

Սոցիալիզմի տնտեսական հիմքի կառուցման ժամանակաշրջանում ՀՍՍՀ բանվոր դասակարգը սովետներում ակտիվ ու բազմակողմանի գործունեություն էր ծավալել։ Սովետներում բանվոր դասակարգի գործունեության ակտիվացման կարևոր նախապայմանը սոցիալիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումն էր։ Հանրապետության սոցիալ-քաղաքական կյանքում կատարված տեղաշարժերի հետևանքով փոխվեց բանվոր դասակարգի դիմագիծը, բարձրացավ նրա դերը երկրի հասարակական կյանքում, որի դրսևորման ձևե-

---

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 38, էջ 214։

2 «ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերենցիաների և կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում», մաս. II, Երևան, 1955, էջ 341—344։

ից մեկը բանվորների ակտիվ գործունեությունն էր պետական իշխանության բարձրագույն մարմիններում՝ սովետներում։ Սովետների ընտրություններն աշխատավորությանը պետության կառավարման մեջ ներգրավելու առաջին աստիճանն են։ Սոցիալիստական պետության զարգացման առաջին փուլում, երբ երկրի սոցիալ-քաղաքական կյանքում ուժեղ էին սոցիալիզմին թշնամի տարրերը և ցածր էր աշխատավորության կուլտուրական մակարդակը, անհրաժեշտ էր սահմանադրաբար ապահովել բանվոր դասակարգի թվական գերակշռությունը սովետներում։ Կոմունիստական կուսակցությունը բանվորներին տրված ընտրական արտոնությունները համարել է ժամանակավոր միջոցառում։ Այն չի եղել սովետներում բանվոր դասակարգի աճն ապահովող հիմնական միջոց, այլ հանդիսացել է սովետների բանվորական միջուկի ամրապնդման լրացուցիչ երաշխիք։ Սովետներում բանվոր դասակարգի առաջատար դերը հիմնականում հետևանք էր այն բարձր վստահության ու հավատի, որ նրա նկատմամբ ունեին աշխատավորության ոչ պրոլետարական խավերը։

Սոցիալիստական հասարակության ընտրական սիստեմը բանվորներին հնարավորություն էր տալիս ոչ միայն ընտրվել սովետներում, այլև ակտիվորեն մասնակցել ընտրությունների կազմակերպմանը։ Կենտրոնական և տեղական ընտրական հանձնաժողովների աշխատանքներում լայնորեն ներգրավվում էին հանրապետության բանվոր դասակարգի լավագույն ներկայացուցիչները։ ՀՍՍՀ ընտրական հանձնաժողովների անդամների սոցիալական կազմի հետազոտումը ցույց է տալիս, որ գրանցում աճում էր բանվորների թիվը։ Այսպես, 1930—1931 թթ. սովետների ընտրությունների ժամանակ հանրապետության կենտրոնական, քաղաքային, շրջանային և գյուղական ընտրական հանձնաժողովներում, նախորդ ընտրությունների համեմատությամբ, բանվորների աճը համապատասխանաբար կազմեց՝ 7,4, 21,6, 10,6 և 2,7%[3]։

Սոցիալիզմի տնտեսական հիմքի կառուցման ժամանակաշրջանում Հայկական ՍՍՀ-ում տեղի ունեցած սովետների ընտրությունների ընթացքում առավել բարձր ակտիվություն ցուցաբերեց բանվոր դասակարգը։ Իրականացվում էր կուսակցության հրահանգն այն մասին, որ «սովետների վերընտրություններ անցկացնելիս պրոլետարիատը պետք է երևան բերի առավելագույն ակտիվություն, կազմակերպվածություն և գիտակցականություն»[4]։ 1930/31 թթ. կամպանիայում քաղաքային ընտրական ժողովներին ամենաբարձր մասնակցությունը ցուցաբերեց բանվոր դասակարգը՝ 87,3%, որը նախորդ ընտրությունների համեմատությամբ ավելի էր 6,3%-ով, գյուղսովետներում՝ 74,5 (գյուղացիների մասնակցությունը 61,8% էր)[5]։ Հարկ է նշել, որ բանվոր դասակարգի առանձին ջոկատների կազմակերպվածության, գիտակցականության և քաղաքական հասունության մակարդակի հետ կապված՝ տարբեր էր բանվորների մասնակցությունն ընտրություններին։ Այսպես, Լենինականում արհմիություններում միավորված բանվորության մեջ սովետների վերոհիշյալ ընտրություններում առավել բարձր ակտիվություն ցուցաբերեցին տպագրիչները՝ 100%, մետաղագործները՝ 98,4%, երկաթուղայինները՝ 96,8%, իսկ ամենանվազը՝ շինարարները (83,9%) և փոխադրողները (80,2%)[6]։ Ընտրությունների կարևոր փուլերից մեկը սովետների գործունեության համաժողովրդական քննարկումն էր, որը, լինելով աշխատավորության կողմից սովետների աշխատանքների վերահսկման գործուն միջոց, մեծապես նպաստում էր մասսաների քաղաքական ակտիվության վերելքին։ Պրոլետարական դեմոկրատիան որպես դեմոկրատիայի բարձրագույն ձև, ապահովում էր բանվոր դասակարգի վճռական դերը սովետների գործունեության քննարկման ժամանակ։ Հանրապետու-

---

3 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև ՀՍՍՀ ՀՀՍԵ ՊԿԱ), ֆ. 112, ց. 2, 1 մաս, գ. 257, թ. 2։

4 «ՍՄԿՊ-ն բանաձևերում», մաս II, էջ 450։

5 ՀՍՍՀ ՀՀՍԵ ՊԿԱ, ֆ. 112, ց. 3, գ. 398, թ. 28։

6 Նույն տեղում, գ. 391, թ. 48։

թյան կուսակցական, սովետական և արհմիութենական կազմակերպությունները կարևոր նշանակություն էին հատկացնում սովետների հաշվետու ժողովներին բանվորների ներգրավման հարցին։ 1928/29 թթ. ընտրությունների կապակցությամբ ՀԱՄԿ-ի նախագահության հրահանգում նշվում էր, որ «անհրաժեշտ է հաշվետու ժողովներին մասնակից դարձնել բանվորական լայն մասսաներին, հնարավորություն տալ նրանց քննելու սովետների գործունեության հետ կապված սոցիալիստական շինարարության հարցերը. բանվորների ուշադրությունը կենտրոնացնել սովետներում պրոլետարիատի գաղափարական գծի իրեղաթյուրման ու աղավաղման բոլոր դրսևորումների վրա, սովետներում ընտրել ակտիվ, գործունյա և հեղինակավոր բանվորներ»[7]։

Հանրապետության բանվոր դասակարգն ակտիվորեն մասնակցում էր սովետների գործունեության քննարկմանը։ Այսպես, 1930/31 թթ. ընտրություններ ի ժամանակ քաղսովետների հաշվետու ժողովներին մասնակցում էին բոլոր ընտրողների 71,9, իսկ բանվորների՝ 77,4%-ը, որը նախորդ ընտրությունների համեմատությամբ ավելի էր 29,8 %-ով[8]։ Հաշվետու ժողովներում սովետների գործունեության վերաբերյալ ընտրողների կատարած առաջարկությունների հիման վրա կազմվում և նորընտիր սովետներին էին ներկայացվում պատվիրաններ (նակազներ), որոնց նախագծերի մշակմանն ու քննարկմանն ակտիվորեն մասնակցում էին բանվորները։ Լենինականի նորընտիր քաղսովետին տեքստիլ գործարանի բանվորների տված պատվիրանում նշվում էր, որ քաղսովետը պետք է ունենա շինարարության պլան, քաղաքի հրապարակներից մեկում պետք է կանգնեցվի Վ. Ի. Լենինի արձանը, արագացվեն գյուղացու տան, ջրմուղ կոյուղու և սպանդանոցի կառուցման աշխատանքները, բարեկարգվեն մայթերն ու փողոցները, բարելավվի աշխարհամասի գործունեությունը։ Նշենք, որ այդ պատվիրանները հիմնականում կատարվել էին[9]։ Սովետների գործունեության քննարկմանն ու նրանց ներկայացվող պատվիրանների մշակմանը բանվոր դասակարգի ցուցաբերած գործուն մասնակցության արտահայտություն էր այն, որ 1928/29 թթ. ընտրությունների ժամանակ քաղսովետների հաշվետու ժողովներում բանվորները կազմում էին ելույթ ունեցողների 64,9%-ը[10]։

Ընտրություններում բանվոր դասակարգի դրսևորած ակտիվությունը նպաստում էր սովետների բանվորական միջավայրի ամրապնդմանը։ Սովետներում բանվոր դասակարգի առաջատար դերի արտահայտություններից մեկը բանվոր դեպուտատների թվի աճն էր, որին կոմունիստական կուսակցությունը առանձնապես կարևոր նշանակություն էր հատկացնում։ Համկ(բ)Կ Անդրերկրկոմի 1927 թ. հունվարի դիմումի մեջ ընտրություններում տեղական կազմակերպությունների առաջնակարգ խնդիրներից մեկը համարվում էր սովետների սոցիալական կազմի բարելավումը՝ բանվոր դասակարգի ներգրավման միջոցով[11]։

Սոցիալիզմի տնտեսական հիմքի կառուցման ժամանակաշրջանում աճեց ՀՍՍՀ սովետների բանվորական կորիզը։ Պրոլետարիատի դիկտատուրայի ամուր և հուսալի հենարանը միշտ էլ եղել են քաղաքային սովետները, քանի որ քաղաքներում էր կենտրոնացված բանվորության հիմնական մասը։ Հանրապետության քաղսովետների դեպուտատների սոցիալական կազմի հետազոտումը ցույց է տալիս, որ զգալիորեն ավելացել էր բանվորների թիվը։ Եթե 1926 թ. ՀՍՍՀ քաղսովետներում բանվորները կազմում էին դեպուտատների 36,4,

---

7 Նույն տեղում, ֆ. 112, ց. 4, գ. 209, թ. 124։

8 Նույն տեղում, գ. 208, թ. 9։

9 «Բանվոր», 25. XII. 1929։

10 ՀՍՍՀ ՀԱՄՇ ՊՆԱ, ֆ. 112, ց. 3, գ. 365, թ. 8։

11 «Խորհրդային Հայաստան», 30. I. 1927։

ապա 1931 թ.՝ 53,8%-ը[12]։ Հանրապետության բանվորաշատ երկու վայրերի՝ Երևանի և Լենինականի, քաղսովետներում 1931 թ. բանվորների թիվը 1926 թ. համեմատ աճեց 43,2%-ով, իսկ տեսակարար կշիռն ավելացավ 2 անգամ[13]։ Հանրապետության գյուղական սովետներում բանվորների թիվը փոքր էր։ Նրանք հիմնականում գյուղատնտեսական բանվորներ և բատրակներ էին, որոնք չունեին քաղաքական հասունության բարձր մակարդակ։ Այնուհանդերձ, գյուղական պրոլետարիատը որոշակի դեր էր կատարում սովետներում, որտեղ ևս նկատելի էր նրա աճը։ Այսպես, 1929 թ. գյուղսովետների անդամ գյուղատնտեսական բանվորների ու բատրակների թիվը 1927 թ. համեմատ ավելացավ 7,1, իսկ նախագահների մեջ՝ 9,8%-ով[14]։

Հանրապետության տեղական սովետներում բանվորների աճը ուղեկցվում էր սովետների համահայաստանյան համագումարներում և Կենտրոնական գործադիր կոմիտեում (Կենտգործկոմ) նրա թվի ավելացմամբ։ ՀՍՍՀ սովետների 6-րդ համագումարում (1929) բանվորները կազմում էին պատգամավորների 34,4%-ը, որը 4-րդ համագումարի համեմատ (1925) ավելի էր 18,7%-ով[15]։ Սովետների համագումարների միջև ընկած ժամանակահատվածում հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինը Կենտգործկոմն էր, որի աշխատանքներում ներգրավված բանվորների թվի աճը ևս զգալի էր. 1931 թ. ՀՍՍՀ Կենտգործկոմում բանվորները կազմում էին նրա անդամների 32%-ը, որը 1929 թ. համեմատ ավելի էր 7,8%-ով[16]։ Կոմունիստական կուսակցությունը ոչ միայն հոգ էր տանում բանվորներին սովետներում ընդգրկելու մասին, այլև զարգացնում էր նրանց նախաձեռնությունը, սովորեցնում պետություն կառավարել։ Դա արտահայտվում էր սովետների գործադիր մարմիններում բանվորների ներկայացուցչությամբ։ Փաստերը ցույց են տալիս, որ, որպես կանոն, սովետների նախագահության անդամ բանվորների տեսակարար կշիռը բարձր էր բանվոր դեպուտատների տոկոսային հարաբերությունից։ Այսպես, 1927 թ. բանվորները կազմում էին Երևանի քաղսովետի դեպուտատների 45, իսկ նախագահության անդամների՝ 58,1%-ը, Լենինականում՝ համապատասխանաբար 31, 9 և 47, 1%-ը, գյուղսովետներում՝ 6,7 և 8,9%-ը[17], ՀՍՍՀ Կենտգործկոմում՝ 18,7, նրա նախագահությունում՝ 45,4%-ը[18]։

Սովետներում բանվոր դասակարգի առաջատար դերն ու ռեալ ազդեցությունը որոշվում էր ոչ միայն բանվոր դեպուտատների թվով, այլև նրանց պետական-քաղաքական հասունությամբ, դասակարգային ինքնագիտակցությամբ, սոցիալիզմի իդեալներին նվիրվածությամբ։

Սովետների գործունեության մասշտաբների ու արդյունավետության աճը մեծապես կախված էր բանվոր դեպուտատներից, այն վիթխարի քաղաքական, գաղափարական ու բարոյական ազդեցությունից, որ ուներ բանվոր դասակարգը սովետների աշխատանքների վրա։ Չնայած սոցիալիզմի տնտեսական հիմքի կառուցման ժամանակաշրջանում ՀՍՍՀ քաղաքները թվով քիչ էին, այնուհանդերձ, հանրապետության քաղսովետներում բանվոր դասակարգի ծավալած ակտիվ ու բազմակողմանի գործունեությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում։ Ժողովրդական մասսաներին սովետների գործնական աշխատանքներում ներգրավելու կարևոր միջոցներից մեկը քաղսովետի սեկցիաներն

---

12 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 2, 1 մաս, գ. 134, թ. 14—20։

13 Հ. Ս. Կարապետյան, Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի ձևավորումը և զարգացումը (1920—1940), Երևան, 1980, էջ 147։

14 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 3, գ. 366, թ. 1—6։

15 Նույն տեղում, գ. 398, թ. 60։

16 Նույն տեղում, թ. 20։

17 Նույն տեղում, գ. 366, թ. 10։

18 Նույն տեղում, գ. 368, թ. 180—182։

էին։ Դրանք սովետների ամենամասսայական օղակներն էին, որտեղ պետության կառավարման դպրոց էին անցնում աշխատավորական լայն զանգվածները, դաստիարակվում ու կոփվում էին ղեկավար կադրեր։ Բանվորները լայնորեն ներգրավվում և ակտիվորեն մասնակցում էին քաղսովետների սեկցիաների աշխատանքներին։ Նրանց թիվն առանձնապես մեծ էր առանցքային սեկցիաներում և պատահական չէ, որ դրանց նիստերին դեպուտատների մասնակցությունն ամենաբարձրն էր։ Այսպես, Լենինականի քաղսովետի կոմունալ տնտեսական սեկցիայում բանվորները կազմում էին անդամների 73,5, տրանսպորտայինում՝ 66,7, արդյունաբերականում՝ 61,8%-ը, իսկ դրանց նիստերին մասնակցությունը համապատասխանաբար կազմում էր 85, 80, 81%։ Համեմատության համար նշենք, որ ժողովրդական լուսավորության սեկցիայի անդամների մասնակցությունը 32,4% էր[19]։ Բանվոր դեպուտատներն ակտիվորեն ու նվիրումով էին մասնակցում սեկցիաների աշխատանքներին՝ մեծապես նպաստելով դրանց գործունեության արդյունավետությանը և նպատակասլացությանը։ Ուշագրավ է օրինակ, Երևանի քաղսովետի 1928 թ. հաշվետվությունը, ուր նշված է, որ «սեկցիաներից ամենակենսունակը կոմունալ-շինարարական սեկցիան է, որի նիստերում քննության առնված հարցերը և ընդունված որոշումները կազմել են քաղսովետի և կոմունալ բաժնի աշխատանքների առանցքը։ Սեկցիայի աշխատանքների աշխուժացման նախապայմանը նրա բանվորական կազմն է (66,3%), որը մեծ հետաքրքրություն էր հանդես բերում քննարկող հարցերի նկատմամբ։ Այս սեկցիայի բոլոր որոշումները եղել են ուշագրավ իրենց գործնականության տեսակետից, որի համար մրցանակաշխատության ժյուրին արժանավոր սեկցիայի մրցանակը հատկացրել է նրան»[20]։ Սեկցիաների բանվոր անդամներից կազմակերպվում էին բրիգադներ, որոնք ստուգում էին հիմնարկ-ձեռնարկությունների աշխատանքները։ Երևանի քաղսովետի կոոպերատիվ-առևտրական սեկցիային կից կազմակերպված բանվորական բրիգադը (49 բանվոր) 1930 թ. ստուգել էր քաղաքի հիմնարկ-ձեռնարկություններում բանվորական մատակարարման վիճակը, որի վերաբերյալ քաղսովետին տվել էին 19 զեկույց։ Բրիգադը հայտնաբերել էր, որ որոշ ձեռնարկություններում (կարի, ծխախոտի, փայտամշակման) չկան ճաշարաններ, իսկ մի քանիսում էլ (պահածոների, մեխանիկական, մետաքսի) անբավարար էր բանվոր-ծառայողների սննդի որակն ու ճաշարանների սանիտարական վիճակը։ Քաղսովետը, հաշվի առնելով բրիգադի առաջարկությունները և ձեռնարկությունների բանվորների ցանկությունները, ձեռնարկել էր միջոցառումներ, որի հետևանքով փայտամշակման ու կարի գործարաններում բացվել էին ճաշարաններ, մեխանիկական, կարրիդի և պահածոների գործարաններին կից կազմակերպել էին խանութներ ու բուֆետներ, որոշ չափով բարելավվել էր քաղաքի մյուս հիմնարկ-ձեռնարկությունների ճաշարանների սանիտարական վիճակն ու սննդի որակը[21]։

ՀԿ(բ)Կ VI համագումարը, նշելով որ «սեկցիաների աշխատանքներին ակտիվ մասնակցություն են ցուցաբերում հատկապես բանվոր դեպուտատները»[22], բարձր գնահատեց նրանց ծավալած բազմակողմանի գործունեությունը։

Բանվոր դասակարգն իր առաջատար դերը սովետներում իրականացնում էր ոչ միայն դեպուտատների ու ակտիվիստների միջոցով։ Բանվորներին սովետների աշխատանքներին առավել լայնորեն մասնակից դարձնելու, նրանց պահանջներին ու ցանկություններին ավելի մոտիկից ծանոթանալու, մասսա-

---

19 Նույն տեղում, գ. 408, թ. 11—47։

20 Նույն տեղում, ց. 2, գ. 952, թ. 119։

21 Նույն տեղում, ց. 2, 1 մաս, գ. 248, թ. 1—3։

22 «Հայաստանի Կ(բ)Կ համագումար, ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետու նյութեր ՀԿ(բ)Կ 6-րդ համագումարին», Երևան, 1929, էջ 93։

ՀԱՄՀ ԳԻՏ. ՏՈՒՆ

ների հետ կենդանի կապը պահպանելու նպատակով քաղսովետների նախագահության և սեկցիաների նիստերը հաճախ անց էին կացվում արտադրական ձեռնարկություններում։ Բանվորներն ակտիվորեն ու հետաքրքրությամբ էին մասնակցում դրանց՝ իրականացնելով սովետների գործունեության ամենօրյա վերահսկումը։ Քաղսովետների նախագահության նիստերը հաճախ տեղի էին ունենում այն ձեռնարկություններում, որոնք թերանում էին արտադրական պլանների կատարման հարցում, ուր ցածր էր բանվոր-ծառայողների կարգապահությունը և թույլ էր սոցմրցությունն ու հարվածայնությունը։ Այդ ձեռնարկություններում գումարված նիստերում բանվորների ակտիվ ու գործուն մասնակցության շնորհիվ վեր էին հանվում արտադրության զարգացմանը խոչընդոտող բացերը։ Այսպես, 1931 թ. Երևանի «Արարատ» տրեստում կայացած քաղսովետի նախագահության նիստը, որին մասնակցում էին նաև լիմոնադի և գարեջրի գործարանների բանվորները, լսեց ձեռնարկության վարչության զեկուցումը արդյունաբերական պլանների թերակատարման մասին։ Զեկուցման քննարկման ժամանակ բանվոր-ծառայողները որպես պլանների թերակատարման հիմնական պատճառներ նշեցին գործարանում սոցմրցման ու հարվածայնության թույլ ծավալումը, հումքի անկանոն մատակարարումը, աշխատանքային կարգապահության ցածր լինելը և այլն։ Ձեռնարկության արտադրական պլանների ճեղքվածքները վերացնելու նպատակով քաղսովետն ընդունեց ընդարձակ որոշում[23]։

Սովետներում բանվոր դասակարգի գործունեության նոր ձև էին 1930-ական թվականներին մեր երկրում լայն տարածում ստացած դեպուտատական խմբերը։ Դեպուտատական խմբերի տարածումը կապված էր սովետների աշխատանքների վերակառուցման հետ, որի նպատակն էր սովետների գործունեությունն ավելի մոտեցնել սոցիալիստական շինարարության խնդիրներին։ Ինչպես նշվում էր ՀՍՍՀ Կենտգործկոմի 1931 թ. հրահանգում, «շրջադարձը դեպի արտադրության հարցերը պահանջում է, որ սովետները սերտ կապ հաստատեն գործարանների և արտադրական ձեռնարկությունների հետ, որի համար անհրաժեշտ է արտադրության մեջ ստեղծել և ամրապնդել սովետների ստորին բջիջները՝ դեպուտատական խմբերը»[24]։ Դեպուտատական խմբերը կազմակերպվում էին այն հիմնարկ-ձեռնարկություններում (նաև կոլտնտեսություններում ու սովխոզներում), որտեղ աշխատում էին սովետների առնվազն 3 դեպուտատ։ Նրանք իրավունք ունեին գործելու միայն այդ ձեռնարկության շրջանակներում և պետք է աջակցեին արտադրական պլանների անխափան կատարմանը, հետևեին ձեռնարկություններում կուսակցության ու կառավարության որոշումների կենսագործմանը, օգնեին սովետներին՝ բարելավելու բանվորների կուլտուր-կենցաղային պայմանները, ամրապնդեին սովետների և մասսաների միջև ամենօրյա կապը։ ՀՍՍՀ-ում դեպուտատական խմբերը ստեղծվեցին 1931 թ. սկզբներին և շուտով լայն տարածում ստացան։ Եթե 1931 թ. օգոստոսին հանրապետության արտադրական ձեռնարկություններում կային 12 դեպուտատական խմբեր՝ 127 անդամներով, ապա մի տարի հետո՝ 112 խումբ, 3470 անդամներով[25]։ Դեպուտատական խմբերի անդամների գերակշռող մասը արտադրության բանվորներ էին։ Այսպես, 1931 թ. Երևանի 17 հիմնարկ-ձեռնարկությունների դեպուտատական խմբերում բանվորները կազմում էին անդամների 77,7%-ը[26]։ Չնայած դեպուտատական

---

23 ՀՍՍՀ ՀՊԱ, ֆ. 112, ց. 2, գ. 1041, թ. 32։

24 Նույն տեղում, 1 մաս, գ. 353, թ. 31։

25 Նույն տեղում, ց. 2, գ. 368, թ. 1։

26 Նույն տեղում, գ. 1123, թ. 90։

խմբերի մեծ մասը դեռևս գտնվում էր կազմակերպչական ընթացքում, այնուամենայնիվ նրանք լայն գործունեություն էին ծավալել։ Երևանի քաղսովետը, բարձր գնահատելով մեխանիկական, կարի, պահածոների և փայտամշակման գործարանների դեպուտատական խմբերի կատարած աշխատանքները, նշում էր, որ նրանց անմիջական նախաձեռնությամբ այդ ձեռնարկություններում կազմակերպվել էին տնտեսաշվարկային բրիգադներ, հսկիչ կետերի միջոցով իրականացվել էր արտադրամասերի աշխատանքների վրա հսկողություն, ստուգող խմբերի օգնությամբ հսկողություն էր սահմանվել վերադաս մարմինների որոշումների կատարման վրա, օժանդակություն էր ցույց տրվել երկրորդային հումքի արտադրամասերի ստեղծմանը[27]։ Կարի գործարանի և «Երկոշ» արտելի դեպուտատական խմբերը վերցրել էին քաղաքամերձ որոշ գյուղերի շեֆությունը և այնտեղ զումարված նիստերում հաճախակի լսել գյուղսովետների ու կոլտնտեսությունների վարչությունների զեկուցումներն իրենց աշխատանքների մասին, բերքահավաքի ժամանակ օգնել նրանց[28]։

1932 թ. դեկտեմբերին կայացած ՀՍՍՀ արտադրական ձեռնարկությունների դեպուտատական խմբերի առաջին խորհրդակցությունը, բարձր գնահատելով խմբերի գործունեությունը, ընդգծեց, որ «դեպուտատական խմբերը ձեռնարկություններում դարձել են սովետների մասսայական աշխատանքների ամենակենսունակ և նպատակահարմար ձևերից մեկը, որոնք մեծ աշխատանք են տանում արտադրական պլանների կատարման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, արտադրանքի ինքնարժեքի իջեցման, բանվորների կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ»[29]։

Սովետներում բանվոր դասակարգի գործունեության ակտիվացման համար կարևոր նշանակություն ունեցավ մեր երկրում անցկացված սովետների աշխատանքների ստուգատեսը, որի նախաձեռնողը Խարկովի քաղսովետն էր (ստուգման էին ենթարկվում քաղսովետների ու գյուղսովետների աշխատանքները)։ Քաղսովետների աշխատանքների ստուգատեսի նպատակն էր բարձրացնել քաղսովետի դերը որպես կուսակցության գլխավոր գծի կենսագործողի, սեկցիաների գործունեությունը վերակառուցել այնպես, որ դրանց աշխատանքներն ավելի մոտենան արտադրության խնդիրներին, ձեռնարկություններում ամրապնդել և ծավալել դեպուտատական խմբերի ցանցը։ Անդրկենտգործկոմի հրահանգով ՀՍՍՀ-ում ստուգատեսն անցկացվեց 1931 թ. նոյեմբեր— 1932 թ. հունվար ամիսներին, որի ընթացքում 296 կոմպլեքսային ու մասսայական բրիգադներ ստուգման ենթարկեցին 63 հիմնարկ-ձեռնարկություն, ստուգատեսի մեջ ներգրավվեց ավելի քան 1500 բանվոր-ծառայող[30]։ Ստուգատեսի աշխատանքները ղեկավարելու համար քաղսովետներին կից ստեղծվել էր շտաբ, որը սեկցիաների անդամներից կազմակերպում էր կոմպլեքսային բրիգադներ և դրանք ամրացնում հիմնարկ-ձեռնարկություններին։ Այդ բրիգադների աշխատանքներին օգնելու և օժանդակելու նպատակով ձեռնարկություններում ստեղծվում էին մասսայական բրիգադներ։ Ստուգատեսի կոմպլեքսային և մասսայական բրիգադների խնդիրներն էին. արտադրության մեջ եղած ճեղքվածքները վերացնելու համար օգնել կազմակերպելու հանդիպական պլաններ՝ զարկ տալով սոցմրցմանն ու հարվածայնությանը, արտադրամասերում ստեղծել տնտեսաշվարկային բրիգադներ, ստուգել սովետներին ընտրողների տված պատվիրանների կատարումն ու դեպուտատական խմբերի աշխատանքները և այլն։ Հանրապետության բանվոր դասակարգը լայնորեն ներգրավված էր քաղսովետների աշխատանքների ստուգատեսին. շտաբների, կոմպլեքսային ու մասսայական բրիգադների անդամներից բանվորներ էին համապատասխանաբար 65, 60,8

27 Նույն տեղում, գ. 1123, թ. 90։
28 Նույն տեղում, թ. 150։
29 Նույն տեղում, գ. 368, թ. 1։
30 Նույն տեղում, գ. 1083, թ. 60։

և 51%-ը[31]։ Ստուգատեսի բրիգադները մեծ աշխատանք էին կատարում հիմնարկ-ձեռնարկությունների աշխատանքների բարելավման ուղղությամբ։ Լենինականի քաղսովետը նշում էր, որ «ստուգատեսի ընթացքում բրիգադները բանվորների ակտիվ ու լայն օժանդակությամբ ոչ միայն հայտնաբերել են ձեռնարկությունների աշխատանքների բացերն ու թերությունները, այլև գործնականորեն մասնակցել դրանց վերացմանը»[32]։

Ստուգատեսը մեծ խթան հանդիսացավ ձեռնարկություններում արտադրական պլանների կատարման, աշխատանքային կարգապահության բարձրացման, սոցմրցման ու հարվածայնության ծավալման համար։ Այսպես, Լենինականի տեքստիլ գործարանը նոյեմբեր ամսվա պլանը կատարել էր 74,7, իսկ դեկտեմբերինը՝ 94,9%-ով, դեկտեմբերին սոցմրցման մեջ էր եղել 1071, իսկ հունվարին՝ 1384 բանվոր, դեկտեմբերին կազմակերպվել էր 16, իսկ հունվարին՝ 31 տնտեսաշվարկային բրիգադ, նոյեմբերին եղել էր 293 բանվորական օր գործալքում, իսկ հունվարին՝ 64[33]։ Ստուգատեսը մեծապես նպաստեց ձեռնարկություններում դեպուտատական խմբերի աճին ու ամրապնդմանը, որոնք լայնորեն օժանդակում էին ստուգատեսի բրիգադների աշխատանքներին։ Եթե մինչև 1931 թ. նոյեմբերը հանրապետության ձեռնարկություններում գործում էին 17 դեպուտատական խմբեր՝ 175 անդամներով, ապա ստուգատեսի վերջում՝ 56 խմբեր՝ 1120 անդամով[34]։ Քաղսովետների աշխատանքների ստուգատեսը, որին ակտիվորեն մասնակցեց հանրապետության բանվոր դասակարգը, կարևոր նշանակություն ունեցավ սովետների գործունեության վերակառուցման համար։

Հանրապետության բանվոր դասակարգն ակտիվորեն մասնակցում էր ՀՍՍՀ սովետների համագումարների աշխատանքներին։ Բանվորներն աշխատանքային մեծագույն խանդավառությամբ էին դիմավորում սովետների համահայաստանյան յուրաքանչյուր համագումար։ Բանվոր դասակարգի քաղաքական բարձր հասունության ու ստեղծագործական անսպառ եռանդի դրսևորումներից էր համագումարների պատվին աշխատանքային պարտավորությունների ընդունումը։ Երևանի պահածոների գործարանը ՀՍՍՀ սովետների VII համագումարի անունով կազմակերպել էր 10 հարվածային բրիգադ 130 բանվորով, պարտավորվել աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել 28,3%-ով, բարելավել արտադրանքի որակն ու ինքնարժեքը իջեցնել 20%-ով, վերացնել գործալքումները[35]։ Համագումարներում բանվորներն ակտիվորեն մասնակցում էին ժողովրդատնտեսական կարևոր նշանակություն ունեցող հարցերի քննարկմանը, հանդես գալիս բազմաթիվ հետաքրքիր ու արժեքավոր առաջարկություններով՝ խորապես գիտակցելով յուրաքանչյուր ձեռնարկության, արտադրական յուրաքանչյուր բջջի նշանակությունը սոցիալիստական շինարարության առաջընթացի համար։ ՀՍՍՀ սովետների VI համագումարում (1929) առաջին հնգամյա պլանի քննարկմանը մասնակցել էր մոտ 100 մարդ, որոնց մեջ քիչ չէին բանվորները[36]։

Այսպիսով, կուսակցության ձեռնարկումների հետևանքով սոցիալիզմի տնտեսական հիմքի կառուցման ժամանակաշրջանում աճեց և ամրապնդվեց ՀՍՍՀ սովետների բանվորական միջուկը։ Սովետների բազմազան օղակներում բանվոր դեպուտատների ծավալած լայն ու բազմակողմանի գործունեությունը մեծապես նպաստեց դրանց աշխատանքների արդյունավետության բարձրացմանը։ Սովետներում բանվոր դասակարգի ակտիվ գործունեությունը ապա-

31 Նույն տեղում, ց. 3, գ. 414, թ. 22—25։

32 Նույն տեղում, ց. 2, 1 մաս, գ. 337, թ. 60։

33 Նույն տեղում, թ. 101—103։

34 Նույն տեղում, թ. 74—77։

35 «Խորհրդային Հայաստան», 14. II. 1931։

36 ՀՍՍՀ ՀԱՀԿ ՊԿԱ, ֆ. 112, ց. 3, դ. 15, թ. 226։

ցույցն էր լենինյան այն դրույթի ճշմարտացիության, որ սոցիալիզմի ժամանակ «բաղաքակրթված հասարակությունների պատմության մեջ առաջին անգամ բնակչության մասսան կրարձրանա այն աստիճանի, որ նա կկարողանա ինքնուրույն մասնակցել ոչ միայն քվեարկություններին ու ընտրություններին, այլև ամենօրյա կառավարմանը»[37]։

ДЕЯТЕЛЬНОСТЬ РАБОЧЕГО КЛАССА АРМ. ССР В СОВЕТАХ В ПЕРИОД СОЗДАНИЯ ЭКОНОМИЧЕСКИХ ОСНОВ СОЦИАЛИЗМА (1926—1932)

ВИКТОР ДАЛЛАКЯН

Резюме

В период создания экономических основ социализма возрастала роль рабочего класса Армянской ССР в советах. Рабочий класс республики принял активное участие в выборах советов и их деятельности. Одним из проявлений ведущей роли рабочего класса в советах является рост числа депутатов—рабочих в них, чему Коммунистическая партия придавала особое значение. В рассматриваемый период укрепилось пролетарское ядро советов, рабочий класс республики развернул в них активную и разностороннюю деятельность.

37 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 33, էջ 149։